

Ֆինանսական օգնության ծրագրերի ամփոփում

Dignity Health-ի Ֆինանսական օգնության քաղաքականության մեջ նկարագրված են ֆինանսական օգնության ծրագրերը, որոնք հասանելի են չապահովագրված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդների համար, որոնք բավարարում են որոշակի պահանջներն ըստ եկամտի՝ Dignity Health-ի կողմից ստացած անհրաժեշտ բժշկական ծառայությունների համար վճարելու համար: Չապահովագրված հիվանդը՝ դա այն անձն է, որը չունի բժշկական ապահովագրություն՝ չի օգտվում մասնավոր ապահովագրությունից կամ պետության կողմից ֆինանսավորվող ծրագրից, և որն իրավունք չունի փոխհատուցում ստանալու հիվանդանոցային հաշվի համար: Ոչ բավարար ապահովագրություն ունեցող հիվանդը, դա այն անձն է, որն ունի բժշկական ապահովագրություն, սակայն ունի բարձր հիվանդանոցային հաշիվներ, որոնք մասամբ փոխհատուցվում են ապահովագրական ընկերության կողմից:

Անվճար խնամք՝

- Եթե դուք չապահովագրված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդ եք, որի ընտանեկան եկամուտը, ըստ Դաշնային աղքատության սանդղակի՝ կազմում է մինչև 200%, դուք կարող եք անհատույց հիվանդանոցային ծառայությունները ստանալու իրավունք ունենալ:

Զեղչված խնամք

- Եթե դուք չապահովագրված կամ ոչ բավարար չափով ապահովագրված հիվանդ եք, որի ընտանեկան տարեկան եկամուտը, ըստ Դաշնային աղքատության սանդղակի՝ կազմում է 200-500%, ապա ձեզին կպահվի կանոնավոր հավաքագրվող գումարը (Amount Generally Billed, AGB)՝ Դաշնային օրենքով սահմանված գումար, որն արտացոլում է այն գումարները, որոնք փոխանցվում են հիվանդանոց մասնավոր ապահովագրական ընկերություններից և Medicare-ից (ներառյալ համավճարները և չփոխհատուցվող նվազեցման գումարները) ձեր կողմից ստացած անհրաժեշտ բժշկական ծառայությունների համար:

Եթե դուք մեր Ֆինանսական օգնության քաղաքականության ներքո ֆինանսական օգնություն ստանալու իրավունք ունեք, ապա դուք պարտավորված չեք լինելու վճարել ավելին, քան ստորև նկարագրված կանոնավոր հավաքագրվող գումարը (Amount Generally Billed): Որակավորվելու դեպքում դուք կարող եք նաև առանց տոկոսագումարի ընդլայնված վճարման պլանի համար դիմել:

Դուք երբևիցե պարտավորված չեք լինելու կանխավճար կատարել կամ այլ վճարային մեխանիզմներից օգտվել՝ շտապ օգնություն ստանալու համար: Հիվանդանոցի Ֆինանսական օգնության քաղաքականության և ֆինանսական օգնության հայտաձևերի անվճար պատճենները հասանելի են

հիվանդանոցի ստորև նշված վեբ կայքում կամ մուտքի մոտ գտնվող ընդունման կետերում: (Հետևեք “Admitting” ընդունման կետ, կամ “Registration” գրանցման կետ, նշաններին): Այդ փաստաթղթերի պատճեններն ըստ պահանջի կարող են նաև փոստով ուղարկվել ձեզ, եթե զանգահարեք ձեր հիվանդանոցի Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին ստորև նշված հեռախոսահամարով:

Traducción disponible: Այդ փաստաթղթերը կարող եք նաև ձեռք բերել իսպանական և այլ լեզուներով ձեր հիվանդանոցի վեբ կայքում, հիվանդանոցի ընդունման կետում կամ զանգահարելով հիվանդանոցի հեռախոսահամարով:

Dignity Health-ի Ֆինանսական խորհրդատուները կարող են պատասխանել ձեր հարցերին, տրամադրել տեղեկատվություն մեր ֆինանսական օգնության քաղաքականության մասին և օգնել ձեզ ֆինանսական օգնության համար դիմելու գործընթացին: Մեր աշխատակազմը գտնվում է հիվանդանոցի ընդունման կետում, որտեղ կարող եք զանգահարել նաև ստորև նշված հեռախոսահամարով:

Chandler Regional Medical Center 1955 W. Frye Road, Chandler, AZ 85224

Ֆինանսական խորհրդատվության բաժին 480-728-3564 | **Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին** 855-892-2400
www.dignityhealth.org/chandlerregional/paymenthelp

Mercy Gilbert Medical Center 3555 S. Val Vista Drive, Gilbert, AZ 85297

Ֆինանսական խորհրդատվության բաժին 480-728-7281 | **Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին** 855-892-2400
www.dignityhealth.org/mercygilbert/paymenthelp

St. Joseph's Hospital & Medical Center 350 W Thomas Road, Phoenix, AZ 85013

Ֆինանսական խորհրդատվության բաժին 602-406-4923 | **Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին** 877-877-8345
www.dignityhealth.org/stjosephs/paymenthelp

St. Joseph's Westgate Medical Center 7300 N 99th Avenue, Glendale, AZ

Ֆինանսական խորհրդատվության բաժին 866-556-8221 | **Հիվանդի ֆինանսական ծառայությունների բաժին** 877-877-8345
www.dignityhealth.org/stjosephs/paymenthelp